

0.

Օլրեկ - ոլորեկ. օլօր օլօր, ոլորունք:
Օլսլավու - փայտե բարակ կամ հաստ
զլան՝ խմորը բանալու համար:
Օձուկապա կամ շապիկ - օձի թողած մաշ-
կը:
Օրան - օրօրոց, որորան մանկանց. կախո-
րան, կախումա՝ որորան:
Օրով - որովհետև ցորենի:

Ֆ.

Ֆոն, ֆեօն - հոն, այնտեղ:
Ֆոն, ֆեօն - հոն, այնտեղ:
Ֆոն, ֆեօն - հոն, այնտեղ:
Ֆալ, ֆաֆալ - բեռան ծանրութեան
տակ հանուած նմանաձայն՝ բառ:



Առածներ

Անթիլն քարն ալ կ'ուտէ կու:
Բանս բո՛ւրդ է:
Գալը (զայլը) իրեն համար գէշ յերած
(երազ) չի տեսնար:
Էն է հեծեր՝ էլ փնտռէն:
Էնը իշուն քով կապես նէ՝ հա՛ յառուցը
կ'առնա հա՛ փառուցը:
Էն իշ գիտէ տէ՛ նուէն ի՛նչ է:
Էրես տո՛ւր՝ աստառ ալ կ'ուզէ կու:
Խենթն ըսաց՝ խելօքն հաւտաց:
Խենթին՝ խրա՛տը, սեւին սապօ՛նը:
Հէ՛մ լանք, հէ՛մ էրթանք:
Շունն յիշես նէ աքին խաղցնէ կու:
Ձուր տեսնայ նէ՛ ձուկ կ'ըլլի, մուկ տես-
նայ նէ՛ մուկ կ'ըլլի:
Վենձ էլը ախոռը մոռցանք:
Քուրտը չ'ըսեր քի թանա թթու է:

Աստիճաններ

Յամպուկցի կըցի կըցի,
Դոանն յէքսէն կըսմըթեցի,
Արին էլալ չի վըլացի:

Հաստա՛յօլ՝ փաստակը պօլ.
Սարբերդ՝ բամպակը պօլ.
Յարաբերդ՝ բե՛ր ու կե՛ր:

Անէծքներ

Աչքդ փոքնա՛յ - Տունդ աւրի՛ - Շիկդ
տակդ մնա՛յ - Գետինը մտնա՛ւ - Վար
ասնի՛ւ - Վայրդ տա՛ւ - Օր արեւ չի տես-
նա՛ւ - Դոնէ դուռ մուրա՛ւ - Կեննութեա-
նըդ խերը չի տեսնա՛ւ: Ձեռքդ չորնա՛յ -
Ժամուն դուռը մուրա՛ւ - Ոտքդ կոյի՛ր -
Հոգը մտնա՛ւ: Քօրնա՛ւ - Շիվանդը նըս-
տի՛ւ - Ձորնա՛ւ - Վար ասնիս՝ օխտը
դա՛քը...:

Աւելորդապաշտականք

Ձեռք Կէոյայ նէ՛ փարա պիտի դայ:
Սաղ աչքդ խաղայ նէ՛ բարի է, սօլդ խա-
ղայ նէ՛ չար է:
Աղը թափողը՝ անդենականին մէջ պըր-
դունքով (չըթունք) տի ժողովէ:
Ունքդ (յօնքդ) խաղայ նէ՛ ճամբորդ տի
դայ տի:
Ոտքիդ տապանը կէոյայ նէ՛ ճամբորդ տըլ-
լիս տի:
Յերկնքի աստղնտիքը վէր տի էրթան նէ՛
մէկը մեռած կ'ըլլի:
Գիշերը չունը օռնայ նէ՛ մահ կու պա-
տահի դուռ դրացնու քով:
Սոխին փուրը կրակը ձգես նէ՛ դժոխ
կ'երթաս:
Տղուտ ըզունկը (եղունգ) մի՛ կ'ըլլեր քի
գող չըլլի:
Կըլլած ըզունկդ կրակը նետես նէ՛ խեն-
թենաս կու:
Հարդ, մարդ լաց ընես նէ՛ վատակած ոս-
կիներդ քար կը կըլլին:

Հ. ԱԼԵԳՈՐԻ ՅՈՎՍԷՓԵԱՆ

(Յետ մահու հրատարակութիւն)

Վ Ե Ր Չ

ԱՐՇԱԿ ԹԱԳԱՒՈՐ

ԵՐԳԱՅԱՌՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

ՀԻՆԳ ԱՐԱՐՈՎ

Գրեց

Հ. ՍԱՀԱԿ ՏԵՐ ՄՈՎՍԵՍԵԱՆ

(Շար. տե՛ս բազմ. 1958, թ. 8-10, էջ 204)

Ե Ր Ր Ո Ր Դ Ա Ր Ա Ր

(Բեմը կը ներկայացնէ
ընդունելութեան նոյն դպիւիքը)

ՏԵՍԻՍ Ա.

(Վարագոյրը բացուելուն՝ Պերն պա-
հակը ներս կը մտնէ Հայաստանի երեք
նահանգներուն բոլորները՝ Արտաշատ,
Երուանդ եւ Զաւէն, եւ փոքրիկ Սպան-
դարատ՝ հազիւ 13 տարեկան, Կամարա-
կան տոհմին միակ ժառանգը: Հագուած
են այնպէս՝ ինչպէս Աւարայրի Դիցագ-
ներու նախարարները: Կը կրեն մօրուք եւ
սուրբ: Պերն ծոկով կը մեկնի):

ԱՐՏԱԽԱԶԴ. - Ներսէս Հայրապետը
մեկ արքունիք կանչել է, թագաւորին եւ
սպարապետին հետ հաշտեցնելու համար:
ԵՐՈՒԱՆԴ. - Ձարմանալի բան. Կա-
թողիկոսը յետ անիծելու Արշակ թագա-
ւորը՝ սպառնացեր էր այլեւս արքունիք
ոտք չկոխել: Հիմա ի՞նչ անցաւ դարձաւ
սր իր անդառնալի որոշումը ետ առել է:
ԶԱՒԷՆ. - Ձարմանալու ի՞նչ կայ, Ծո-
փաց աշխարհի բոլոր, Գրիգորի տան կա-
թողիկոսները կը կշտամբեն Արշակունի
թագաւորները, կ'անիծեն ու կը նողմեն.
բայց երբ Հայաստանի գերագոյն փառա-
մը սպառնայ, անոնք միշտ թագաւորնե-
րու կողքին կը կանգնին:

ՍՊԱՆԴԱՐԱՏ. - Արեան կայն է, և այդ
կային ձեր ծայրերն ալ՝ Մամիկոնեան
եւ Կամարական տոհմերն են:
ԵՐՈՒԱՆԴ. - (Շոյելով Սպանդարատի

գիտաւոր գլուխը) Սիրուն իշխանիկ, ո՞վ
ըսաւ քեզի այդ բանը:

ՍՊԱՆԴԱՐԱՏ. - (Համարակութեամբ)
Ազատարարս, Վասակ սպարապետը, ո-
րուն գրկին մէջ մեծցայ:

ԱՐՏԱԽԱԶԴ. - (Խոժոռած) Թերատի
իշխան, ինչո՞ւ յիշեցուցիր ինձի այդ ա-
նունը: Վերջին յաղթանակով՝ այդ ատելի
Մամիկոնեանը Վահագնի հաւասարեցաւ:

ԵՐՈՒԱՆԴ. - Յաղթական սպարապետը
այնչափ հմայք ունի Ծոփաց աշխարհի
մէջ, որ հակառակ իմ յայտնի հրամանիս,
ոչ միայն իմ ծաղկաւոր երիտասարդներս,
այլ մանկամարդ աղջիկներն ալ հայրենա-
սիրութեամբ վառուած, կը բողոքեն զոն-
գադունդ վագել Մամիկոնեան դրօշին
տակ: Վասակը հայկական երկնակամարին
վրայ պերճափայլ աստղ մըն է, որուն
լոյսը երբեք չի շփանիւր:

ԱՐՏԱԽԱԶԴ. - Ի՞նչպէս կ'ուզես որ չի-
ջանի. հայ ժողովուրդը Գրիգորեան եւ
Մամիկոնեան տոհմերը միշտ նկատած է
եւ միշտ պիտի նկատէ հայրենասիրութեան
ջահեր:

ԵՐՈՒԱՆԴ. - Բայց Մամիկոնեանները
հայրենասիրութեան ո՞ր բովին մէջ թըր-
ծուեր են: Ի՞նչ օրէնքով անոնք ազդ եւ
հայրենասիրութիւնը իրենց մենաշնորհ
դարձուցեր են:

ԶԱՒԷՆ. - Անոնք թրծուեր են Ներսէս
Պարթևի դպրոցին մէջ: Կը տեսնե՞ս այս
ծաղկաւոր իշխանը (ցոյց տալով Սպան-
դարատը), աս ալ նոյն դպրոցին շունչով
ուռել է:

ՍՊԱՆԴԱՐԱՏ. - (Աշխուժով) Այո՛, ա-
զատարար հայրազիրս այդ դպրոցին մէջ
դրեր է զիս: Հոն սորվեցայ հայրենիքիս
չղաւաճանել:

ԱՐՏԱԽԱԶԴ. - Այս սիրուն պատանեա-
կը իրաւունք ունի. իր ներկայութիւնը
միայն տժգոհ իշխաններուն մէջ, Արշակի
համար արդէն չարաբանք մըն է:

ԶԱՒԷՆ. - Արտաւազդ, չե՞ս համարիր
որ մեր ազգային ներկայ ողբերգութեան
մէջ՝ դաւելտ մը խառնուած է: Մինչ Վա-
սակ Մամիկոնեան իր փառքի եւ զօրու-

թեան նշոյլներուն մէջ կը շողողայ, ան-
դին Մերութան Արծրունին, որուն խոր-
հուրդով ու դրդումով ապստամբեր ենք
մեր թագաւորին դէմ, վատաստութեան
մէջ կը փայլի:

ԱՐՏԱԽԱԶԴ. — Մերութան Արծրունին
նշանախօս մը ունի: «Ամէնքը մեռնին, ես
ապրիմ»:

ՍՊԱՆԴԱՐԱՏ. — (Զայրացած) Յաւի-
տեանկան ամօթ հաւատուրացին, անջըն-
ջելի նախատինք հայրենիքի դաւաճանին:

ԶԱԽԵՆ. — Վարդի կոկոն մըն է այս իշ-
խանիկը, եւ արդէն բացուած է: (Այս
խօսքերուն վրայ յանկարծ ներս կը մտնեն
Հրաչեայ եւ Պերմ, քիչ մը շփոթած վի-
ճակի մէջ):

ՏԵՍԻԼ Բ.

ՀՐԱԶ. — (Յարգանքով խոնարհելով) Պեր-
ճաշուր իշխաններ, Հայրապետը ար-
քունիք հասաւ ճիշտ ժամանակին, բայց
անմիջապէս հրաւիրուեցաւ դռնփակ նիս-
տի մը, որուն կը մասնակցին թագաւորը,
թագուհին եւ սպարապետը:

ԶԱԽԵՆ. — Ինչո՞ւ այդ դռնփակ նիստը:
ՊԵՐՃ. — Ձեմ գիտեր, գաղտնիք է:

ԱՐՏԱԽԱԶԴ. — (Մեկուսի) Զարադու-
շակ լուր...:

ՀՐԱԶ. — Հայրապետը մեզ հոս դրկեց,
որպէսզի ձեզ առաջնորդենք «Չինական
դահլիճը», հոն քիչ մը հանդէսը եւ
կաղաւրուելու համար:

ԵՐՈՒԱՆԴ. — Երթանք քիչ մը Գողթան
դինի խմենք, որպէսզի մտքերնիս պայծա-
ռանայ: Յետոյ վարեւոր լուրեր կը քաղենք
նաժիշտներու անդունդ բերաններէն:

ԲԴԵՇԵՆԵՐԸ. — (Միաբերան) Օ՛ն, եր-
թանք: (Կը մեկնին Պերմին հետ):

ՏԵՍԻԼ Գ.

ՀՐԱԶ. — (Շոյելով Կամսարական իշ-
խանիկին մագերուն խոսքայները) Դուն
ալ, սիրուն Սպանդարատ, զնա հանդէ-
ք «Վարդերու դահլիճին» մէջ, ուր քեզի կը

սպանեն Նուարդ սպարապետուհին եւ իր
զաւակը՝ Մուշեղ Մամիկոնեան:

ՍՊԱՆԴԱՐԱՏ. — (Ուրախութեամբ ձեռ-
քեր շփելով) Ո՛հ, ինչ աղուոր լուր:
Երթամ համբուրեմ մայրիկս եւ եղբայրս
Մուշեղը: (Կը մեկնի գրեթէ ցատկոտե-
լով):

ՏԵՍԻԼ Դ.

ՀՐԱԶ. — (Բոցավառ աչքերով) Վա՛յ
հայ ժողովուրդի գլխուն, որ այսպիսի
կարճատես եւ օտարամոլ իշխաններէ կը
կառավարուի: (Բեմի դռնէն ներս կը մըտ-
նէ Պերմ պահակը եւ կը կանգնի աջ դրան
կողմը):

ՏԵՍԻԼ Ե.

ՊԵՐՃ. — (Զուարթ դէմքով) Կեցցե՛ս
Հրաչեայ, ըսածիդ հաւնեցայ:

ՀՐԱԶ. — Տեղաւորեցի՞ր բռնիները, որ
ինքդինքնին հայոց պետութեան սիւնները
կը համարին:

ՊԵՐՃ. — Այո՛, եւ պատուիրեցի նա-
ժիշտներուն որ զանոնք լաւ մը գինով-
ցնեն՝ մինչեւ որ խեղդենին բոլորովին
կորսնցնեն:

ՀՐԱԶ. — Իմացա՞ր թէ ինչու եկեր են
կայսերական սուրհանդակները Բիւզան-
դիոնէն:

ՊԵՐՃ. — Ո՛չ, գաղտնիք է: (Բեմի ձա-
խակողմեան դռնէն ներս կը մտնեն երեք
բղիշխները: Հրաչեայ եւ Պերմ աջակող-
մեան դռնէն դուրս կ'ելլեն):

ՏԵՍԻԼ Զ.

ԱՐՏԱԽԱԶԴ. — Բիւզանդացի սուրհան-
դակներուն գաղտնի երթուղարձը խոր-
հըրդաւոր մշուշով մը ծածկուած է: Ի՞նչ
եղաւ որ Բիւզանդիոնը, որ երկար ատենէ
ի վեր լուռ կը մնար, աչքերը նորէն դար-
ձուց դէպի Հայաստան:

ԵՐՈՒԱՆԴ. — Բիւզանդիոնը չի կրնար
Հայաստանէն ձեռք քաշել: Հայաստանը
կայսրութեան ամուր պատուարն է:

ԶԱԽԵՆ. — Ոչ մէկ կասկած՝ որ Վաղէս
հռոմէական լեզէոններով եւ արծիւներով
պիտի ողողէ հայոց աշխարհը: (Դուրսէն
կը լսուին գալարափողի երեք զարկեր):
Ահա առաջին աղբանջանը որ վաւետէ
Հայրապետին, թագաւորին եւ սպարապե-
տին գալուստը: Երբ պատերազմը շարու-
նակուի, անկասկած վերջին յաղթանակը
պիտի շահին Արշակ ու Վասակ:
ԵՐՈՒԱՆԴ. — Ի՞նչ պիտի ըլլայ մեր
վերջնական որոշումը:

ԱՐՏԱԽԱԶԴ. — (Վնասկան) Յամառ
դիմադրութիւն: Մի՛ մոռնաք որ հետեւ-
նիս բերած ենք արիւնկալի մարդիկ, ո-
րոնք զինուորական տարազի տակ ծըպ-
տուած՝ աղմկալից ցոյցեր պիտի կատա-
տուած՝ Արշակի դեմակին շուրջ, Արշակի եւ
րեն արքունի դեմակին շուրջ, Արշակի եւ
Վասակի դէմ: (Դարձեալ կը լսուին գա-
լարափողի երեք զարկեր):

ԶԱԽԵՆ. — Բայց Արտաշատը կը պաշտէ
Արշակն ու Վասակը. կը վախեմ որ հա-
կացոյցը աւելի զօրաւոր ըլլայ: (Երբորդ
անգամ կը լսուին գալարափողի երեք զար-
կեր):

ԵՐՈՒԱՆԴ. — Վատահ եմ որ մեր սի-
կարեանները պիտի ցնցեն արքունիքը:
(Հրաչեայ եւ Պերմ կը բանաւ ձախակող-
մեան դուռը, ուսկից ներս կը մտնեն Ներ-
սէս, Արշակ, Վասակ եւ Սպանդարատ՝ որ
Վասակի քովէն չի գտնուիր):

ՏԵՍԻԼ Է.

ՆԵՐՍԵՍ. — (Ազդու ձայնով) Առաջ ե-
կէք, Հայոց Մեծաց դահլիճէն բղիշխներ
(Կը շարունակեն Հայրապետին առջեւ՝ շրջա-
նակ մը ձեւացնելով): Ձեր արագ որոշու-
մէն կախում ունի Հայոց աշխարհի փըր-
կութիւնը կամ կորուստը: Առի՞ք ձեր վեր-
ջին որոշումը:

ԲԴԵՇԵՆԵՐԸ. — (Պահ մը իրարու երես
նայելով) Այո՛, սուրբ Հայրապետ:

ՆԵՐՍԵՍ. — Որոշա՞ծ էք հաշտուիլ ձեր
թագաւորին հետ, եւ զէն ի ձեռին պաշտ-
պանել Հայաստանի ազատութիւնն ու ան-
կախութիւնը:

ԱՐՏԱԽԱԶԴ. — (Կրֆով) Կը յայտարա-
րենք որ Արշակ դահլիճէն հռչակուած
է: Մեր անդառնալի կամքն է՝ որ Հայաս-
տան անպայման անձնատուր ըլլայ մեծա-
զօր արքայից արքային: Արշակը թագա-
ւոր չէ, բռնապետ է:

ՎԱՍԱԿ. — (Փայլակնացալով աչքերով
եւ սուրբ քաշելով) Սուրբ Հայրապետ,
հրաման տուր որ այդ լիբը լեզուն կտրեմ:

ԱՐՏԱԽԱԶԴ. — (Մեկուսի) Ուսկի՞ց
բուսաւ այս ատելի Մամիկոնեանը: Ար-
եան մարդ է:

ՆԵՐՍԵՍ. — Հանդարտէ՛, Վասակ, սու-
րէն վեր՝ կայ երկնքի արդարութիւնը:
(Վասակ սուրբ պատեանը կը դնէ):

ԵՐՈՒԱՆԴ. — Վե՛հ Հայրապետ, դու
ինքնին գիտես որ մենք տարիներէ ի վեր
պատերազմի մէջ ենք, ոչ մէկ օր հանգիստ
չունեցանք, եւ մեր երեսներու քրտինքը
մեր սլաքներով սրբեցինք: Լաւ է մեզի՛
պարսից թագաւորին ծառայել, քան մեր
ոճրագործ թագաւորին:

ԱՐՏԱԽԱԶԴ. — (Ուժգին) Անկցի՛ Ար-
շակ, մեռնի՛ բռնաւորը...:

ՎԱՍԱԿ. — (Որ Արշակին քով կեցած է,
սուրբ կը քաշէ եւ կ'ուզէ խոյանալ Արտա-
ւագդի վրայ, բայց Արշակ ձեռքը կը բռն-
նէ): Կնամարդի դաւաճաններ, երանի թէ
պատերազմի դաշտին վրայ ըլլայիք, որ
ձեր հաշիւը մաքրէի:

ԱՐՇԱԿ. — (Հեզմանքով) Կրակոտ եւ
անդուստ պատակ, մեղք չէ՞ սուրիդ ծա-
րին որ կ'ուզես բթացնել նապաստակնե-
րու մորթին մէջ:

ՎԱՍԱԿ. — (Զայրացած) Սուրբ Հայ-
րապետ, մի՛ հաւատաք այս մարդոց. ա-
տենք հազիւ կ'երեւին ոսկմի դաշտին վը-
րայ, եւ իրենց ժամանակը կ'անցընեն ի-
րենց զոհակներուն մէջ, կը զուարճանան
ճաշերով, գինեբրութով եւ պարերով:
Միայն հայրենասէր քաջերն են որ քրտին-
քը տէգով կը ջնջեն:

ՆԵՐՍԵՍ. — Արտաւագդ, ո՞ւր է Գեղամ
բղիշխը եւ միւս նախարարները, որոնց
հրաման զրկուած էր հոս գտնուելու:

ԱՐՏԱԽԱԶԴ. — Անոնք չուզեցին գալ:

ՎԱՍԱԿ. - Հայոց թագաւորը օտար վեհապետի մը ոտքն երթալու պէտք չու-
նի: Եթէ Արքայից արքան խաղաղութիւն
կ'ուզէ, իր բանակները հայկական հողէն
թող քաշէ:

ՍՊԱՆԴԱՐԱՏ. - (Աշխուժով) Այս բա-
ռերն ո՞րքան անոյշ կը հնչեն ականջիս:

ԱԼԱՆԱՍՂ. - Իմ տէրս իր հանդիսաւոր
երգումին հետ՝ ահաւոր սպանուալիք մը
դրած է. Ոյ՛ որ յանդգնի Հայոց եւ Պար-
սիկ թագաւորներու մէջ զփութութիւն սեր-
մանել, ցուլի արիւն խմցնել պիտի տայ
անոր:

ՎԱՍԱԿ. - Քու տէրդ այնչափ մարդ-
կային արիւն խմած է որ հիմա ալ ցուլի
արիւնով կ'ուզէ դուրսանալ:

ԱԼԱՆԱՍՂ. - Վասակ, զգոյշ գըլ-
խուդ...:

ՎԱՍԱԿ. - Յիշէ արքունի ախոռապետի
զրուիք: Հիմա ալ նոյն մարդուն առջեւ
կանգնած ես. եւ այս անգամ հայկական
հողի վրայ:

ԱՐՇԱԿ. - (Կատաղութեամբ բոքո-
քած) Աղջկորդի, կամաց կամաց սրտիդ
մաղձը դուրս կը թափես... Մատնիչ եւ
դաւաճան. միթէ դու չե՞ս գիտեր թէ այդ
ծրարին մէջ իմ մահուան դատականքը
կայ...:

ԱԼԱՆԱՍՂ. - (Վիրաւորուած) Տէր ար-
քայ, դու զիս նախատինքներով ծածկե-
ցիր, որովհետեւ ցեղային կապն ուրա-
ցած, սասանեան արքային կը ծառայեմ:
Դու չես տեսներ աչքիդ գերանը: Ո՞ւր են
Կամսարական իշխանները, որոնք ինծի
աւելի քեզի մօտաւոր ազգականներ էին.
Ի՞նչ մնաց այդ փառաւոր տոհմէն (մա-
տով ցոյց տալով Սպանդարտը). ի հօրէ
եւ ի մօրէ որք մանուկ մը:

ՍՊԱՆԴԱՐԱՏ. - (Մեղմալով) Ո՛հ.
ես որք չեմ: Իմ հայրս Վասակն է, մայրս՝
Նուարդ Մամիկոնեան, եւ եղբայրս՝ Մու-
շեղ իշխանը, որոնք զգուհիներով զիս կը
մեծցնեն:

ԱՐՇԱԿ. - (Արցունքը աչքերուն մէջ)
Թշուառական, ինչո՞ւ վերանորոգեցիր
հին ու նոր ցաւերս...:

ԱԼԱՆԱՍՂ. - Տէր արքայ, պատասխան
կ'ուզեմ. պէտք է չուտով մեկնինք:

ՆԵՐՍԷՍ. - Ալանասղան, Տիգրոնի տա-
ժանելի ճամբորդութենէն վատաւարեկ,
հանգչելու պէտք ունիս. (դառնալով դէ-
պի Պերմի՝ որ կանգնած կ'ըլլայ բեմի ա-
ջակողմեան դրան խորշին մէջ) Պերմ, ա-
ռաջնորդէ իշխանը «Վարդերու դահլիճը»,
ուր մեր բարձրաստիճան հիւրը վայելէ
հայկական հիւրասիրութեան բարիքները:

ԱԼԱՆԱՍՂ. - Մեծ արքային հաշտա-
րար առաջարկը երկնքէն իջած պարզեւ
մըն է, զոր պէտք է գլխու վրայ դնէք:
(Պերմ պահակը կու գայ բեմին վրայ՝
դուրս հանելու համար իշխանը. Ալանա-
սղան քանի մը քայլ կ'առնէ, ապա կրակոտ
շեշտով մը) Այժմ ես ձեզի կը յայտարա-
րեմ իմ ողորմած թագաւոր կայսեր սուրբ,
հօր եւ անպայման հրամանը. Եթէ Ար-
շակ թագաւոր մերժէ հրաւերս, կ'երդ-
նում յարեն եւ ի կրակ, որ Հայոց աչ-
խարհէն հուրն ու սուրը պիտի չվերնայ
(կը մեկնի Պերմին հետ, կատաղի դէմ-
քով):

ՏԵՍԻԼ Ժ.

ՆԵՐՍԷՍ. - (Տագնապած) Հայաստան
երկայրի սուրի մէջ է. կա՛մ գերութեան
չղթաներ, կա՛մ արիւն՝ ազատութեան
համար...: Տէր արքայ, ես չեմ ուզեր որ
դուն Տիգրոն երթաս:

ԱՐՇԱԿ. - (Վառակամ) Եթէ չընա-
ղատուիմ՝ պատերազմի դաշտէն չեմ դառ-
ուիր: Գիտեմ որ ինծի բանտ եւ կապանք
կը սպասեն: Եթէ արիւնս թափի, թող
այդ արիւնը Հայաստանի համար թափի
(պահ մը կանգ կ'առնէ): Հրաչեայ, բը-
ղեշխները ներս մտցուր: (Պահակը որ
կանգնած է դրան ձախակողմեան խորշին
մէջ, կը մեկնի առանց երեւնալու):

ՆԵՐՍԷՍ. - Տէր արքայ, եթէ երկդիմի
քաղաքականութեան մը հետեւած չըլլա-
յիր՝ այսօր հռոմէական լեզուները կող-
քիդ կանգնած կ'ըլլային եւ Հայաստան
փրկուած:

ԱՐՇԱԿ. - (Գլխիկոր) Արեւի պէս պայ-
ծառ ճամարտութիւն...:

ՓԱՌԱՆՁ. - (Անայայտ) Արշակ,
դուարթեք եղիր, անպարիշտ բղէջանե-
րը չուրախացնես...:

(Ձախակողմեան դռնէն Հրաչեայ ներս
կը մտցնէ երեք բղէջանները):

ՏԵՍԻԼ Ժ.

ԱՐՇԱԿ. - Գահերէց իշխաններ, Ալա-
նասղան Պահլաւունին յանուն Արքայից
արքայի զիս Տիգրոն կը հրաւիրէ, իբրեւ
թէ սիրոյ եւ խաղաղութեան դաշինք կըն-
քելու համար: Ձեր խորհուրդը կարեւոր
է:

ԱՐՏԱԽԱԶԴ. - (Զոր կերպով) Պէտք է
որ երթաս, այս է մեր խորհուրդը...:

ՆԵՐՍԷՍ. - Ես Հայաստանի վիճակը
տխուր ու մռայլ կը տեսնեմ: Արշակ ար-
քան պէտք է որ տեղէն շարժի: Նա քա-
ջութիւն ներշնչելու անսպառ աղբիւր մըն
է:

ՆԵՐՍԷՍ. - Մենք, ընդհակառակն,
Հայաստանի ապագան փայլուն կը տես-
նենք:

ԱՐՇԱԿ. - Եթէ ձեր բանակները միա-
ցընէք արարատեան թագաւորական դուն-
դին, կը դիմադրենք մինչեւ որ հռոմէա-
նացիները հասնին: Ապահով եմ որ
կան լեզուները յաղթանակը կը տա-
մենք վերջնական յաղթանակը կը տա-
նինք: Յոյսի ձայնը պէտք է որ ամէն ճըշ-
մարիտ հայու սրտին խօսի:

ԱՐՏԱԽԱԶԴ. - Մեր որոշումը անդառ-
նալի է: Պատերազմի համար ոչ մէկ զին-
ուոր, ոչ մէկ դահլիճ:

ԶԱԽԷՆ. - Կեցցէ խաղաղասէր Արքա-
յից արքան:

ՓԱՌԱՆՁ. - Ամէն ազգ արժանի է իր
ճակատագրին:

ՎԱՍԱԿ. - Թշուառ է ժողովուրդ մը,
որ իր ազատութիւնը կամովին օտար բռ-
նակալի մը կը վաճառէ:

ՍՊԱՆԴԱՐԱՏ. - Ես սիրեցի ազատու-

թիւնը եւ պատրաստ եմ անոր համար ա-
րիւն թափելու:

ԱՐՏԱԽԱԶԴ. - Կը պահանջենք որ զէն-
քերը վար դրուին: Այսօր չկայ հայ տուն
մը՝ ուր մտած չըլլայ սուգ, արցունք,
հառաչանք, հեծեծանք: Արիւնահոսու-
թիւնը պէտք է դադրի: Զկայ զինուոր մը
որ չփախաքի ընտանեկան քաղցը կեան-
քին:

ՓԱՌԱՆՁ. - Փափկասիրտ Արտաւազդ,
այսօր հայ արիւնով առուակ ձեւացած է,
վաղը Երբ ստրկութեան հաստ շղթան պա-
րանոցիդ վրայ ճղմէ՝ արեան առուակը
ծովի պիտի փոխուի: Այսօր հառաչանք
եւ հեծեծանք կայ տուներու մէջ, վաղը
անոնք մինչեւ երկինք պիտի բարձրանան,
եւ երկինքը խուլ պիտի մնայ, որովհետեւ
վատասիրտներուն յիսերիմ թշնամի է:

ՆԵՐՍԷՍ. - Կռիւր անհաւատար է:
Այի մը ժողովուրդ չի կրնար բերաւոր
մարդոց եւ փրկելու դէմ դնել:

ՓԱՌԱՆՁ. - Մեր պատերազմը դադա-
րի կռիւ է, որ կ'ոգեւորէ, կը խանդա-
վառէ: Սպարտացի Լեոնիդաս՝ բուռ մը
քաջերով զարկաւ Զարթախեց Քսերքսէսի
մէկ միլիոնոց բանակը եւ Ելլադայէն
դուրս քշեց:

ԱՐՏԱԽԱԶԴ. - (Կատաղ) Դու, սիւ-
նեցի ոճրագործ, դու դեռ արեան կը տես-
չաս: Դու կը վախես որ Ասթինէի քով կը
նուաղիս: Այն օրը որ դուն ոտք դրիր Հա-
յոց արքունիքը, այն օրէն Արշակը ան-
դունդէ անդունդ գլորեցաւ:

ՓԱՌԱՆՁ. - (Մոլեգնած) Լուէ՛, լիբբ
լեզու, երկրի վրայ Փառանձեմ անհամե-
մատ է:

(Հեռուէն կը լսուին ազմուկներ, որոնք
հետզհետէ կը բարձրանան. որոշապէս կը
լսուին այս խօսքերը. խաղաղութիւն կ'ու-
զենք... զէնքերը վար...: Հրաչեայ եւ
Պերմ երկու դռներէն ներս կը մտնեն եւ
անմիջապէս կը լսուի ազգակներ. Պատե-
րա՛ղմ... Պահ մը՝ ազգակները կը
դադրին եւ կը վերածուին անկապ խօսքե-
րու):

ՏԵՍԻԼ ԺԲ.

ՀՐԱԶ. - (Դողալով) Տէր արքայ, արքունիքը կատաղի ցուցարարներէ չըջապատուած է...: Կը փորձեն դռները խորտակել: Պալատականները ահ ու սարսափի մէջ են: Նուարդ իշխանուհին եւ Մուշեղ սեպուհը արքունիքէն դուրս նետուեցան եւ փորձեցին խռովարարները ցրուել, բայց անհաւանք եղաւ:

ԱՐՏԱԽԱԶԳ. - (Մեկուսի) Ուրախ եմ, մեր քաջերը դիրք դրաւեր են:

ՊԵՐՃ. - Քանի մը բերաններէ լսեցի անունները Շապուհի, Ալանապանի:

ՎԱՍԱԿ. - (Տագնապած) Խռովարարներուն մէջ զինուորական տարազով մարդիկ կա՞ն:

ՀՐԱԶ. - Այո՛, տէր սպարապետ, եւ բաւական թիւով:

ՎԱՍԱԿ. - (Մեկուսի) Գէ՛շ նշան...:

ՊԵՐՃ. - Բայց մայրաքաղաքի ժողովուրդը անոնց դէմ սաստիկ կատաղած է:

ՍՊԱՆԴԱՐԱՏ. - (Բոցավառ աչքերով) Պատրաստ եմ սուրս քաշելու՝ աղատութեան թշնամիներու դէմ:

ՆԵՐՍԷՍ. - Փութա՛, Վասակ, լռեցուր այդ սիկարեանները. խեղճերին դարձած մարդիկ են, արիւն խմելու պատրաստ...:

ՎԱՍԱԿ. - Կը հնազանդիմ հայրապետական բարձր հրամանին: (Դառնալով պահակներուն) Հրաշեայ, Պերճ, ետեւէս եկէք:

ՍՊԱՆԴԱՐԱՏ. - Ես ալ կու գամ (կը մեկնի Վասակի ետեւէն, որ պահակներով միասին դուրս կ'ելլէ):

ՏԵՍԻԼ ԺԳ.

ՆԵՐՍԷՍ. - (Մտաւոր) Լսեցի՞ք, բըշխներ, ըմբոստութեան մէջ ձեր մատը կայ:

ԱՐՏԱԽԱԶԳ. - (Բռնուն կերպով) Ամբոխը իրաւունք ունի իր կամքը պարտադրելու: Արշակին սիրտը քարացած է:

ԱՐՇԱԿ (Ձայրացած) Իրաւունք չունէ՞ր, Հայրապետ, Արշակաւանը հիմնե-

լու: Հոն ապաւինող սիկարեաններով այդ ապստամբ նախարարները հրապարակէն շուտով մաքրած կ'ըլլային...:

ՎԱՍԱԿ. - (Դուրսէն. արդէն հասած է ամբոխին առջեւ եւ գոռ ձայնով մը կը պոռայ) Լսեցէ՛ք, Հայրապետի սինըքոր զաւակներ... Սպասաւորներ, առէ՛ք դաւաղանները եւ փառաւոր ծեծ մը քաշեցէք այս իժերուն, որ ողնաշարին կոտորի...: (Աղմուկը կը դադարի):

ՆԵՐՍԷՍ. - (Ուժգին) Հայոց բղէջիներ, ձեր մարդասիրական լեզուները կեղծիքով օծուած են, արեան հեղուքը ձեր փոխը չէ, ատիկա պատրուակ է ձեր սրտերուն չարութիւնը ծածկելու: Դուք լաւ դիտէք որ Պարսկաստան չթէ Արշակի պէս քաջարի թաղաւոր մը եւ Վասակի պէս տաղանդաւոր զօրավար մը ունենար՝ աշխարհի կը տիրէր: Բայց դուք եւ հայոց ուրիշ մեծամեծները նախանձով եւ ատելութեամբ զիրար կը գերազանցէք: Հայու մը յաջողութիւնը՝ ուրիշ հայու մը քունը կը փախցնէ: Հայու մը փառքը՝ ուրիշ հայու մը աչքի փուշն է:

ՆԵՐՍԷՍ. - Սակայն դուն էիր որ Արշակին հազուեցուցիր Կայէնի անէծքը: Արշակը չար է, չենք ուզեր զինքը:

ՆԵՐՍԷՍ. - (Անխռով) Եթէ Արշակ բիրտ անգամ չար է, բայց աստուածապաշտ է. Եթէ մեղաւոր է, բայց ձեր թաղաւորն է:

ԲԴԵՇԵՆԵՐԸ. - (Միաբերան) Դուք անոր Կայէնի անէծքը զգեցուցիք:

ՆԵՐՍԷՍ. - (Վեհաբեամբ) Ես իմ անէծքս անոր վրայէն կը վերցնեմ, եւ դայն զթած եւ ողորմած Աստուծոյ արդարութեան կը յանձնեմ:

ԱՐՇԱԿ. - (Ձուարթացած) Ո՛հ, ինչ քաղցր ձայն մը իջաւ սրտիս խորը:

ՓԱՌԱՆՁ. - (Արտասուագին) Ողորմած Աստուծոյ, զթա հէգ թշուառին...:

(Վասակ բեմին ետեւէն լսելի ձայնով կը գոչէ. Տեղերնէդ չչարժիք: Կը լսուի ձայն մը ներսէն. Կ'ուզենք մեր արջի տեսնել մեր կաթողիկոսը, մեր թաղաւորը, մեր թաղուհին. մինչեւ որ զանոնք

չտեսնենք՝ չենք լուր: Վասակ ներս կը մտնէ կատաղի աչքերով. ետեւէն Սպանդարտը):

ՏԵՍԻԼ ԺԴ.

ՎԱՍԱԿ. - (Տրտմած) Այս ամբոխային ցոյցը աւելի վտանգաւոր է քան պալատական յեղափոխութիւն մը: Խուժանին մէջ խառնուած տեսայ սեպուհներ, զնդապետներ, մինչեւ անգամ զօրավարներ, որոնք լալաղին աչքերով կը խնդրէին որ թաղաւորը անյապաղ Տիգրոն մեկնի եւ պատերազմը վերջ գտնէ:

ՓԱՌԱՆՁ. - (Անձկան) Սպարապետ, կացուցիւն յուսահատական է:

ՎԱՍԱԿ. - Այո՛, դժեհայ, յուսահատական:

ՁԱՅՆԵՐ ԲԵՄԻ ԵՏԵԻՆ. - Կ'ուզենք կենդանի աչքերով տեսնել կաթողիկոսը, կենդանի թաղուհին: Հոն մոզ մը վայ թաղաւորը, թաղուհին: Հոն մոզ մը վայ որ կրնայ անոնց չարիք հասցնել:

ՎԱՍԱԿ. - Ս. Հայրապետ, հայ ժողովուրդը դեռ անապաշտ է. կը կարծէ թէ Արտաւազը, մարաց բղէջիւ՝ մոզ եւ կամ մարմինը մշուշի փոխելով, աչքերու առջեւն անհետացնել: Եթէ ամբոխին չենք կայանաք՝ արիւն պիտի թափի:

ՆԵՐՍԷՍ. - Արիւն չեմ ուզեր, Տէր արքայ, Երթանք ներկայանալ: (Կը մեկնի Ներսէս, Արշակ եւ Փառանգեմ):

ՏԵՍԻԼ ԺԵ.

ԱՐՏԱԽԱԶԳ. - (Հեզօրէն) Վասակ, ինչո՞ւ տաղանաւոր ես: Կ'ուզե՞ս պատե-
րազմը շարունակել: Ահա Արշակ, ահա լալաղի, անոր անբը, ահա դո՛ւ: Ձէն ի Անդովի, անոր անբը, ահա լալաղի թափա-
ռաշըջիկ ժուռ եկէք պատերազմի դաշտե-
րու վրայ:

ՎԱՍԱԿ. - (Բարկանայթ) Մոզ եւ կա-
խարդ, կը հեղեն: Եթէ համոզուած չըլ-
լայի թէ Աստուած մեզմէ Երեսը դարձու-
ցել է, ես ձեզ կը փակէի ձեր դղեակնե-
ցել է:

րուն մէջ, ձեզի կանացի պատմութեաններ կը հաղուեցնէի, ձեռքերնիդ ասեղ եւ դեր-
ձան կու տայի, եւ ձեր փոխարէն՝ հայ
քաջարի կիներէ բանակ մը կազմելով կը
սուրայի յաղթանակէ յաղթանակ, մինչեւ
Տիգրոն, կը դառնայի Հայաստան, եւ ձեզ
չլթայի դարձելով՝ յաղթական կառքիս ե-
տեւէն կը քաշկոտէի մինչեւ Արտաշատի
խորվիրապը, ուր պիտի դառնայիք օձե-
րու եւ ճճիներու կերակուր:

ՁԱՅՆ ՄԸ ԲԵՄԻՆ ԵՏԵԻՆ. - Հրաշքով
մը մեր սիրելիները մշուշն վար իջեր են:

ՆԵՐՍԷՍ. - (Բեմին ետեւէն) Նանրա-
հաւատ ժողովուրդ, որ քրիստոնէութիւ-
նը ընդունեցար ոչ թէ ջերմեռանդ հաւատ-
քով, այլ բռնութեամբ, Տրդատի զէնքե-
րու վախին տակ: Ե՛րբ պիտի դառնաս
լոյս հաւատաւոր:

ՈՒՐԻՇ ՁԱՅՆ ՄԸ ԲԵՄԻՆ ԵՏԵԻՆ. -
Արքայ քաջ, լռեցուր պատերազմը, հաշ-
տուէ Շապուհին հետ:

ՎԱՍԱԿ. - (Դառնացած) Հայրենիքէն
յոյսը կտրած մարդիկ կոյրերու կը նը-
մանին, որ չփոթութեան մը մէջ փախչե-
լու ատեն, խորխորատի մէջ կը գլորին:
(Այս խօսքերը հազիւ սկսած՝ ներս կը
մտնեն Ներսէս, Արշակ եւ Փառանգեմ):

ՏԵՍԻԼ ԺԶ.

ԱՐՇԱԿ. - (Կորովով) Վասակ, ամէն
բան վերջացած է...: Իմ անողոր ճակա-
տադիրս դիւս կը հալածէ: Քանի որ կը
բռնադատուիմ որ Տիգրոն երթամ, կը
խոնարհիմ ժողովուրդի կամքին առջեւ,
անմիջապէս կը մեկնիմ հայկական հողէն:

ԲԴԵՇԵՆԵՐԸ. - (Միաբերան) Կեցցէ՛
Շապուհ, կեցցէ՛ Արշակ:

ՓԱՌԱՆՁ. - (Մեկուսի) Գուցէ Շա-
պուհի հաւատարիմ երզումը փրկէ եղկե-
լին զլուխը...:

ՆԵՐՍԷՍ. - (Ծանրութեամբ) Կը խո-
նարհիմ Աստուծոյ անքննելի կամքին առ-
ջեւ:

ԱՐՇԱԿ. - (Վնասկան) Պահակներ,
ներս մտցուցէք Պահլաւ իշխանը:

ՀՐԱԶ. Եւ ՊԵՐՃ. - (Միաբերան) Ար-
քունի հրամանը աչքի վրայ: (Կը մեկնին
առանց բեմին վրայ երեւնալու):

ԱՐՏԱԽԱԶԴ. - (Գոռուցակ ժպիտով)
Ընկերներ, մեկնինք մեր երկրները, տա-
րածենք ուրախարար լուրը՝ թէ Արշակ
խոնարհած է Շապուհին առջեւ:

(Պահակները մերս կը մտցնեն Ալանա-
զանը եւ կը փաշուին իրենց նախկին տե-
ղերը):

ՏԵՍԻԼ ԺԷ.

ԱԼԱՆԱՍՂԱՆ. - (Զուարթ դեմքով)
Պատրաստ եմ արքայական հրամանին:

ԱՐՇԱԿ. - (Մեկամաղաձու) Վճռած եմ
այս գիշեր իսկ մեկնելու: Կ'ուզեմ անդամ
մըն ալ վայելել կապոյտ երկնքին վրայ
չողացող արծաթափայլ լուսինը, եւ անոր
չուրջը պար բռնող թրթուռն աստղերը:

ԱԼԱՆԱՍՂԱՆ. - Իմաստուն որոշում:
Անմիջապէս Տիգրոն պիտի փութացնեմ
սուրհանդակ մը, Արքայից արքային ա-
ւետելու ուրախ լուրը: Հետո բերած եմ
բազմաթիւ տաճիկ ուղտեր, որոնց վրայ
բեռնուած են թանկագին պարզեններ,
զորս պիտի նուիրես Ասթինէին:

ԱՐՇԱԿ. - (ձակատը շփելով) Ո՞վ է
այդ Ասթինէն...:

ԱԼԱՆԱՍՂ. - (Յանկարծակիի եկած)
Այսքան շուտով մոռցար արեաց եւ ան-
արեաց օրիորդը, Սասանեան թաղին
պատուական մարդարիտը:

ԱՐՇԱԿ. - Եթէ Ասթինէն մարդարիտ
է՝ Փառանձեմը քրոջիս է: Եթէ Ասթի-
նէի չըթունքները մահկանացու կաւէ են՝
Փառանձեմի չըթունքները վարդի թերթեր
են: Կը նախընտրեմ արեւէս զրկուիլ՝ քան
սինեաց Փառանձեմին դաւաճանել:

ՓԱՌԱՆՁ. - (Մեկուսի) Հիմա Արշա-
կի թուի դէմքը՝ ձիւնէն աւելի սպիտակ
կ'երեւի աչքերուս (յուզումէն կ'արտա-
ուէ):

ԱԼԱՆԱՍՂ. - (Մահացած) Ի՞նչ պիտի
լսէ պարսիկ ժողովուրդը՝ եթէ տաճիկ
ուղտերը դատարկ վերադառնան:

ԱՐՇԱԿ. - (Գոռուցաբար) Մի՛ վրդո-
վիր, հետդ բերած տաճիկական ուղտերը
պատուոյ ուղեկիցներ պիտի ըլլան իմ ըս-
պիտակ ջորիիս, որ իր կռնակին վրայ
պիտի կրէ հայկական հող, հայկական
ջուր եւ հայկական գինի:

ԱԼԱՆԱՍՂԱՆ. - (Հեգնական) Ասո՞նք
են արքայական դանձերդ, զորս պիտի
տանիս Արքայից արքային ոտքը:

ԱՐՇԱԿ. - (Խրոխտանով) Ո՛չ, Ալա-
նասղան, ասոնք պատուական դանձեր են,
որոնց յարգը ես եւ վասակ միայն գի-
տենք: Ուր որ ես բնակիմ, նոյնիսկ խոր
բանտին մէջ, կ'ուզեմ որ Հայաստան հոն
փոխադրուած ըլլայ...: Հոն պիտի դո-
վանամ Արածանիի կենդանարար ջուրով,
պիտի դուարթանամ Գողթան անմահարար
գինիով:

ԱՐՏԱԽԱԶԴ. - (Բարկանայք եւ մե-
կուսի) Անպատկառ յանդգնութիւն...
գլխուն իջած ծանր աղէտը փոխանակ ա-
նոր սրտին մէջ աղգային զգացումները
թմրեցնելու, զանոնք դեռ աւելի բորբո-
քեր են:

ՎԱՍԱԿ. - (Բարկութեմէն կրակ կըտ-
րած) Ս. Հայրապետ, ոչ ոք անպատու-
հաս կրցեր է յիշոց մը նետել իմ թագա-
ւորի երեսին (սուրը պատեանէն փաշե-
լով). պէտք է որ ես այդ անպատկառ լե-
զուն արմատախիլ ընեմ (փայլ մը առաջ
կ'երթայ):

ՆԵՐՍԷՍ. - (Վասակի ձեռքէն բռնելով)
Մամիկոնեան, սուրդ վար գիր. չեմ ու-
զեր որ իմ աչքիս առջեւ արիւն թափի:

ՎԱՍԱԿ. - (Սուրը պատեանը դնելով)
Պարթեւ հայրապետ, այս երրորդ անգամն
է որ վրէժխնդիր բազուկս կը դասեմ:

ԶԱԻԷՆ. - (Տագնապէն դեղնած) Ար-
տաւաղդ, լեզուդ զսպէ, արիւնի վարժած
մարդ է, մեր գլխուն փորձանք պիտի բե-
րես:

ԱԼԱՆԱՍՂ. - (Շողոքոքութեամբ)
Տէր արքայ, անշուշտ Փառանձեմ թագու-
հին ալ ձեզի պիտի ընկերանայ: Արքայից
արքային չատ հաճելի պիտի անցնի:

ԱՐՇԱԿ. - Ո՛չ, Պահաւ իշխան: Ինծի
պիտի ընկերանայ վասակ, քաջերու մէջ
էն քաջը. իմ գէնքի յաղթանակներու ան-
բաժան ընկերը: Միայն այս տիրասէր
մարդը կարող է զիս պաշտպանել Պարս-
կաստանի դէմ:

ՎԱՍԱԿ. - (Եռանդով լի) Տէր արքայ,
եթէ չկարենամ քեզ փրկել, գոնէ քեզի
համար կը մեռնիմ:

ԱՐՇԱԿ. - Ալանասղան, Շապուհի առ-
ջեւ չպարծիս քու խորամանկութեանդ վը-
րայ: Զիս Տիգրոնի ճամբան հանողը դուն
էիր, ալ իմ դաւաճան նախարարներս
էիր: Անէ՛ծք անոնց գլխուն, որոնք յան-
գըղեցեաց իմ աչքերուս առջեւ փառաբա-
նել իմ մահացու թշնամիս (բղբշխները
սուրբնին վեր կը բարձրացնեն. վասակ
սուրբնին ամոց եւ Արշակի մէջտեղ, ան-
կը կանգնի վիճակի մէջ):

ԲԳԵՇԽՆԵՐԸ. - (Միաբերան) Մեր
սուրբը վար պիտի չդնենք՝ մինչեւ որ
բռնաւորը հայկական սահմաններէն դուրս
չելլէ:

ՆԵՐՍԷՍ. - Խստապարանոց մարդիկ,
կը յանդգնիք վերջին վայրկեաններուն
անդամ սուր քաշել ձեր բնիկ թագաւորին
դէմ...: (Բարեպաշտ եւ յափշտակուած
դէմքով) Ո՛վ դու բարեխնամ,
բարձր ձայնով) Ո՛վ դու բարեխնամ,
մարդասէր եւ արդարադատ Աստուած,
անքուն աչքով պահէ Հայոց աշխարհը եւ
Արշակունեաց սասանեալ գահը...:

ԱՐՏԱԽԱԶԴ. - (Զարախիմ) Ամէն...
ԱԼԱՆԱՍՂ. - Տէր արքայ, հրաման
տուր որ երթամ քիչ մը հանդիմ. մեկ-
նելու ժամուն պատրաստ կ'ըլլամ: (Յե-
ռելու դառնալով դէպի բղբշխները) Հա-
տոյ յատանի աւագ իշխաններ, արքայից ար-
քան երբեք պիտի չմոռնայ ձեր ծառայու-
թիւնը: Դուք առատաձեռն նուէրներով
պիտի փարձատրուիք: (Կը մեկնի ձայնա-
կողմեան դռնէն):

ԶԱԻԷՆ. - Հայրապետդ հայոց, մենք
այլեւս հոս գործ չունինք. ամէն ինչ վեր-
ջացաւ:

ՆԵՐՍԷՍ. - (Խօսքերը ծանր կընելով)

Գացէք, խաւարը ձեզի առաջնորդ...:

(Բղբշխները գոռոգաբար կը մեկնին
նոյն ձայնակողմեան դռնէն):

ՍՊԱՆԴԱՐԱՏ. - Ի՞նչ չարասիրտ մար-
դիկ:

(Բեմին ներսէն կը լսուին գայլոյթի
աղաղակներ, որոնց կը յաջորդեն այս
խօսքերը):

Մահ հայրենիքի դաւաճաններուն:

(Ուրիշ ձայն մը, ներսէն դարձեալ).

Արեւու լոյսը տեսնելու արժանի չեն.

ջախջախեցէք անոնց գլուխները:

(Ուրիշ ձայն մը). Հայկ, վաղարշ,

կոռնակ, մաքուր ձեռքերնիդ մի՛ խոթէք

պիղծ արիւններու մէջ:

ԱՐՇԱԿ. - (Զուարթադէմ) Պահակներ,

առաջ եկէք: (Պահակները որ կանգնած

են իրենց սովորական տեղերը՝ բեմին խո-

րը, մէջտեղ կու գան):

ՏԵՍԻԼ ԺԸ.

ՀՐԱԶԵԱՅ Եւ ՊԵՐՃ. - (Միաբերան)

Պատրաստ ենք բարձր հրամանին:

ԱՐՇԱԿ. - Հրաչեայ, գնա ըսէ արքունի
տաճարապետին որ անմիջապէս Արաբա-
տեան դաշտի հողէն բեռ մը, Արաքս գե-
տի ջուրէն սափոր մը, եւ տիկ մը Գող-
թի անուշահոտ գինիէն բեռնել տայ իմ
թան անուշահոտ գինիէն բեռնել տայ իմ
սպիտակ ջորիիս վրայ, որովհետեւ Հա-
յաստանի այդ երեք բարիքները զիս միշտ
առողջ եւ կայտառ պիտի պահեն: (Պահ.
մը կանգ կ'առնէ) Իսկ դու, Պերճ, գնա
մը կանգ կ'առնէ իշխանին՝ որ չուտով
ըսէ ախոռապետ իշխանին՝ որ չուտով
թամբէ ոսկեկուռ ճարտուկ ճանձկէն նը-
ժոյզս, որ իմ յաղթութեանս ու փառքիս
կենդանի վկան է:

ՀՐԱԶԵԱՅ Եւ ՊԵՐՃ. - (Միաբերան)

Կը հնազանդինք արքայական բարձր հրա-

մանին: (Մեկնելու վրայ են, երբ վասակ

կը կեցնէ գանձնի):

ՎԱՍԱԿ. - (Խրոխտաբար) Պերճ, պատ-

ուիր իմ գինակրիս՝ որ կաղմ եւ պատ-

րաստ պահէ իմ սպարապետական ահի-

պարանոց նժոյզս: Կ'ուզեմ այդ խստերախ

ձիով մտնել Տիգրոն: Այն պարսիկը որ

յանդգնի մօտենալ անոր՝ սարսափէն դեմ-
նի փողին պիտի համբուրէ:

ՓԱՌԱՆՁ. - Թագաւորին եւ սպարա-
պետին հրամանները հաղորդելէ վերջ,
հոս բերէք դահաժառանգ իշխանը եւ Մու-
շեղ սեպուհը՝ իրենց հօր վերջին օրհնու-
թիւնը առնելու համար:

ՊԵՐՃ. - Ձեր հրամանը, հայոց բա-
ժիշ, գլխուս վրայ: (Գլխով խոնարհուով
պահակները կը մեկնին):

ՏԵՍԻԼ ԺԹ.

ՆԵՐՍԷՍ. - (Յուզուած) Անկասկած
Հայաստան կը կորսնցնէ իր ամէնէն հայ-
րենասէր եւ խիզախ թագաւորներէն մէկը:

ՓԱՌԱՆՁ. - (Տխրագին) Երբ Արշակ
եւ Վասակ հայկական հողէն հեռանան,
հայ ժողովուրդը անպաշտպան մնացած՝
պիտի դառնայ հալածական: (Կը լսուի
գալարափողի ձայնը, որմէ յետոյ բեմի
վրայ կ'երևան Պապ եւ Մուշեղ, առջեւէն
ու ետեւէն ունենալով Հրաչեայ եւ Պերն,
որոնք սուրհմուտ են: Ասոնք յետոյ կը
փառաբանեն իրենց սովորական տեղերը: Պապ
հագուած է Արշակի պէս եւ կը կրէ խա-
տաշ գանգուր մագեր, որոնք մինչեւ ու-
սերը կ'իջնեն. մէջքին կապած է ակնա-
կապ սուրբ, շքեղ պատեանով. ոտներն
անցուցած է կարմիր կօշիկներ: Իսկ Մու-
շեղ հագուած է Վասակի պէս, մէջքին
կապած է քանկագին սուր մը):

ՊԱՊ. - (Ներսէս մտնելուն պէս կը վազէ
Փառանձեմին ֆով, եւ անոր պատմութեան
փանցեմէն բռնելով, պիշ պիշ կը նայի Ներ-
սէսին, եւ մատով ցուցնելով գայն) Դիտոյ
մայր, ո՞վ է այս գեղեցիկ եւ պատկառելի
մարդը:

ՓԱՌԱՆՁ. - (Սաստիկ այլայլած) Որ-
դեակ իմ սիրելի, այս սուրբ մարդը Հա-
յոց կաթողիկոսն է: Դժբախտ դէպք մը
զինքն արքունիքէն հեռացուց, երբ դու
դեռ ծնած չէիր (կ'արտասուէ):

ՆԵՐՍԷՍ. - Արթուն եւ սուր աչքեր ու-
նի:

ՓԱՌԱՆՁ. - (Ամօքահար) Սուրբ Հայ-

րապետ, այս մանուկը միակ կապն է իմ
եւ Արշակի մէջ. բայց կանացի չար լե-
զուները կը զրպարտեն զիս թէ ես զայն
դեւերուն նուիրած եմ, իբրեւ նոր Անու-
շաւան մը Սօսեաց անտառին: Այդ չար
լեզուները չեն դադարիր 'ականջէ ականջ
փոխալէ, թէ դեւերը սպիտակ օձերու
կերպարանք առած, որդւոյս վրիզը կը պը-
լուին: Ս. Հայրապետ, լռեցուր այդ նե-
ղաւոր շրթունքները: Դեւերու նուիրուած
մանուկ մը ի՞նչպէս պիտի կարենայ Հա-
յոց թագը ժառանգել:

ՆԵՐՍԷՍ. - (Կարեկցաբար) Դիտոյ, ե-
թէ որդւոյդ արիւնը ժառանգական ապա-
կանութեամբ թունաւորուած չէ, կը փըր-
կուի:

ԱՐՇԱԿ. - (Արցունքը աչքերուն մէջ)
Եկ, որդեակ իմ: (Պապ կը վազէ հօրը
ֆով) Աչքիս լոյս...: Ես երկար ճամբայ
մը պիտի կտրեմ, որուն սկիզբը յայտնի
է, բայց վախճանը անստոյգ: Դուն Ար-
շակունեաց փառապանդ դահին միակ ժա-
ռանգն ես: Ահա քեզի քանի մը պատուէր-
ներ, որոնք պէտք են միշտ մտքիդ մէջ
դամուած մնան:

ՊԱՊ. - (Աշխուժով) Ոսէ, հայր,
պատրաստ եմ լսելու զանոնք:

ԱՐՇԱԿ. - Սուրն ու հպարտութիւն
են որ յաղթանակները կ'ապահովեն: Կեն-
դանի օրինակը աչքիդ առջեւ ցցուած է:
Նայէ միշտ ազատ եւ սրբազան Մասիսին,
որուն ձիւնապատ կատարը լոյսով կը
շողշողայ: Յաւիտենական Մասիսը հայ
հողիին խորհրդանշն է:

ՊԱՊ. - Ամէն առաւօտ կը նայիմ սրբա-
զան լեռան եւ սիրտս հպարտութեամբ
կ'ուռի:

ՆԵՐՍԷՍ. - Գիտցիր, իշխան, որ հե-
թանոս հայերը կը հաւատային թէ Մա-
սիսը քաջերուն բնակարանն է:

ԱՐՇԱԿ. - (Բռնելով Պապի ձեռքէն կը
տանի Արշակունեաց խորանին առջեւ, կը
բանայ վարագոյրը եւ կ'ըսէ). Որդեակ
իմ, ես միշտ հաւատարիմ մնացի Հոռ-
մայեցիներուն, թէեւ սասանեան արքա-
ները ամէնէն փայլուն խոստումներով ու-

ղեցին զիս ուժացնել անոնցմէ: Հոռմա-
կան լէզվոններն էին որ Արշակունեաց
կործանած դահը վերականգնեցին: Բիւ-
ղանդիոնէն նորէն պիտի ծագի Արշակու-
նեաց փրկութեան աստղը: Երգուիր Ար-
շակունեաց այս նուիրական խորանին վը-
րայ, հաւատարիմ մնալ Հոռմական դաշ-
նակցութեան, եւ անհաշտ թշնամի սա-
սանեան բռնակալութեան:

ՊԱՊ. - Հայր, կ'երգնում հաւատարիմ
մնալ Արշակունի զոռոզ արիւնին եւ քու
խմաստուն պատուէրներով:

ԱՐՇԱԿ. - (Որդւոյն ձեռքէն բռնելով
բեմին մէջտեղ կը բերէ) Կ'ողջագուրեմ
քեզ հայրական տաք համբոյրով մը (Կը
համբուրէ):

ՆԵՐՍԷՍ. - (Վառակամ) Առանց Հոռ-
մական արծիւներուն՝ Հայաստան իր ան-
կախութիւնը կը կորսնցնէ:

ՎԱՍԱԿ. - (Լի գորովով) Եւ դու, որ-
դեակ իմ Մուշեղ, կորիւն առիւծու, երդ-
ուիր սպարապետական սուրիս վրայ (սու-
րը կը փաշէ պատեանէն) անշիջանելի սէր
հայրենիքի եւ կոյր հնազանդութիւն բնիկ
թագաւորիդ:

ՄՈՒՇԵՂ. - (Որ Սպանդարտի ֆով կե-
ցած է, ծանր փայլելով կը մօտենայ հօ-
րը՝ Վասակին՝ եւ ձեռքը անոր սուրին վը-
րայ դնելով) Կ'երգնում հայր, վրէժիւն-
դիր կանգնիլ թագաւորին եւ անոր հաւա-
տարիմ սպարապետին արեանը: (Վասակ
կը համբուրէ Մուշեղին ֆակատը):

ՎԱՍԱԿ. - Դիտոյ Հայոց, եթէ ես բախ-
տը չունենամ Հայաստանի կենսատու օղբ
ծծելու, դու քու սպիտակափայլ ձեռքովդ
Մուշեղի գլխուն կապէ հօրը պատուանը-
շանը եւ մէջքին անցուր սպարապետական
սուրը, որ այնչափ անգամ ահ եւ սարսափ
տարածեց թշնամի շարքերուն մէջ (Կը
մերկանայ, պատուանշանը եւ սուրը կը
յանձնէ Փառանձեմին):

ՓԱՌԱՆՁ. - (Յուզումով) Ատիկա
կեանքիս լաւագոյն պարծանքը կ'ըլլայ:

ՎԱՍԱԿ. - Մուշեղ, յետին պատուէր
մըն ալ. դու եւ Սպանդարտ, Մամիկոն-

եան եւ Կամսարական տոհմերուն անքակ-
տելի օղակները պիտի ըլլաք:

ՄՈՒՇԵՂ. - Նա իմ քաջ նիզակակիցս
պիտի ըլլայ:

ՍՊԱՆԴԱՐԱՏ. - Կամսարական տոհմը
երբեք պիտի չդաւէ այդ մեծ պատիւին
(Վասակ կը համբուրէ Սպանդարտի
ֆակատը):

ՆԵՐՍԷՍ. - (Յուզումով) Քանի որ
Աստուած Հայաստանի պաշտպանութեան
սուրը Մամիկոնեանց վաստակաւոր ցեղին
ձեռքին մէջ դրած է, հայ ժողովուրդը
միշտ փառքի եւ յաղթանակի օրեր պիտի
տեսնէ:

ՎԱՍԱԿ. - Մուշեղ, ո՞ր է մայրդ:

ՄՈՒՇԵՂ. - Գնաց խառնուեցաւ ար-
քայասէր ամբոխին հետ: Ըսաւ թէ շատ
յուզումնալից պիտի ըլլայ թագաւորին եւ
սպարապետին բաժանումը: Ժողովուրդը
լալադին ողջերթ պիտի մաղթէ:

ԱՐՇԱԿ. - Պերճ, ամէն ինչ պատրաստ
է:

ՊԵՐՃ. - (Դռնէն առաջ գալով) Այո՛,
Տէր արքայ, այնպէս՝ ինչպէս որ պատ-
ուիրեցիր:

ԱՐՇԱԿ. - (Ձանալով ինքզինքը գալի
յուզումով) Փառանձեմ, ահա հասաւ յե-
տին ժամը: Մենք վայելեցինք փառք, պա-
տիւ, իշխանութիւն, որոնք մեզի համար
եղան ինչպէս վարդի սուր փուշեր: Աշ-
խարհի վրայ երկու անթառամ վարդեր
կան, պատիւ եւ բարի համբաւ: Փառան-
ձեմ, նա միայն զուարթ է՝ ով որ կը հա-
ւատայ հաստատուն սրտով ճշմարիտ Աս-
տուծոյ:

ՓԱՌԱՆՁ. - (Սաստիկ յուզումով) Եթէ
արքայական պալատին մէջ ոճիւրներով
անմահացայ, պատերազմի դաշտին վրայ
ալ անուանի պիտի ըլլամ աշխարհի թա-
գաւորդ գլուխներու առջեւ:

ՆԵՐՍԷՍ. - Երանի թէ արեան ապաշ-
խարութեան մէջ լուայիր ահաւոր ոճիւրդ:

ԱՐՇԱԿ. - Անծանօթ աստղի մը ետեւէ
կ'երթանք: (Դառնալով դէպի Ներսէս)
Գահաժառանգը ձեր հօր պաշտպանու-
թեան կը յանձնեմ: (Արշակ եւ Վասակ

ծնելով Ներսէսի աջը կը համբուրեն, քսելով միաբերան) Տո՛ւր հայրապետական վերջին օրհնութիւնը:

ՆԵՐՍԷՍ. — Ամենակալին օրհնութիւնը ձեզմէ անբաժան:

ԱՐՇԱԿ. — (Ջանալով արցունքը գալիս) Այսպէս կը թողում զքեզ Հայոց աշխարհ, աչքերուս վրայ հրաժեշտի հրատուր արցունքով:

ՋԱՅՆ ՄԸ. — (Բեմին ետեւէն) Պատրաստ եւ կարգապահ:

ՎԱՍԱԿ. — (Չափազանց յուզուած) Մընա բարով հայ ժողովուրդ, ուխտեր էի արեանս վերջին կաթիլը քեզի համար թափել, բայց չար բախտը այդ գերադոյն պատիւէն զրկեց զիս: (Արշակ եւ Վասակ քել քել տուած յամբախալ կը յառաջանան, իրենց առջեւ ունենալով Հրաչեայ

եւ Պերմ պահակները: Թափօրին ետեւէն կու գան Ներսէս, Փառանձեմ, Պապ, Մուշեղ եւ Սպանդարատ: Ներսէն կը լսուի ողջերթի փայլերգը):

Փառք քեզ Հայաստան, ծընող զիւցաղանց խրոխտ Արտաշատէն մինչ նկուն Տիգրոն, Հայն թող ծածանին դրօշներն ոսկեղօծ Կենդանի վրկայ անմեռ յաղթութեանց: Արշակ եւ Վասակ վեհ ախոյեաններ Գոռ ազատութեան եւ վեհ հայրենեաց, Դուք միշտ մեհապանձ ու միշտ յաղթական Ահ եւ սարսափ էք մնաւ բռնաւորաց:

ՎԱՍԱԿ. — (Հագիւ երգին ձայնը մեղմացած, հեռուէն) Մի՛ լար Նուարդ, Մամիկոնեան սպարապետին կինը քաջասիրտ կ'ըլլայ...: Մնաք բարով, քաջ նիդակա-կիցներս, պաշտպանեցէք ազատութիւնը: (Շարունակելի)

Վ ա ր ա գ ո յ ր

Ա Կ Ն Ե Ր

Հոն՝ ուր վրձնի աղբիւրներու կարկաչին հետ
Կը տրոփէ սիրտը Լեւոնի,
Արեւադօժ գարնային օր մը խնկաւէտ
Եւ ուխտագնաց աղօթէի:

Կամարներուն տակ յայտնուէր տեսլանքման,
Վառ խորհուրդին մէջ անցեալին,
Հեթում արքան՝ որ խոյակի մ'ահա՛ վրջան
Կը տարածէ իր ծիրանին:...

Վանքը շղթայ մ'ըլլար, կապէր հողիս իրեն
Ըզմայլանքով. միշտ լըսէի
Ձայնը հնչող թագաւորի մը շրթներէն:

Գային սուրբեր Երանելի,
Թեւատարած առնէին շուրջը՝ աղօթիկեր,
Առաւօտեան ոսկի կոչնակն փրփր հնչէր...

ԱՐՍԵՆ ԵՐԿԱԹ

ՀԱՅԱՍՏԱՆԷՆ - Ս. ՂԱԶԱՐ

Ամէն անգամ երբ հայ գիտնականներու խումբ մը ոտք կը կոխէ Ս. Ղազարու սեմէն, կ'ոգեւորուին բոլոր միաբանները. լուրը իսկոյն կը տարածուի սենեակէ սենեակ, եւ ահա ամէնքը կը փութան ողջունելու Հայաստանէն եկող մեր սիրելի կուռնիկները. ու ջերմ խօսակցութիւնը ծայր կ'առնէ ընկերական սիրազեղ միջոցառում մը մէջ: Գիտական հարցեր իսկոյն կը դառնան նիւթ՝ գաղափարի փոխանակութեան. երկուստեք հետաքրքրական հարցումներ՝ փոխադարձ մշակութային նորանոր նուաճումներու սպասումով:

Այսպէս եղաւ երբ տարւոյս Սեպտեմբերի 15ին այցելութեան եկան հայ փրոֆէսորներ, մասնագէտ՝ փիլիսոփայական գիտութեանց, որոնցմէ ոմանք դասախօս են Մոսկուայի համալսարանը (Յուրախ Ստեփանեան, Ֆելիքս Մոմջեան). իրենց կ'ընկերանային ուրիշ երկու ուսուցիչները ալ: Վենետիկ եկած էին մասնակցելու Ս. Գիտորդ կղզիին մէջ տեղի ունեցած իմաստասիրական համաժողովին, իբր ներկայացուցիչներ Սովետական Միութեան:

Հիացումով այցելեցին Ս. Ղազարու թանգարանը, մատենադարանը: Դժբախտաբար մահուային արձակուրդներու շրջանն ըլլալով՝ կարող մը վարդապետներ բացակայ էին Ս. Ղազարէն:

Հայ իմաստասէրները մեծապէս ոգեւորուեցան երբ իմացան որ գիրենք շրջապատող եկեղեցականները հմուտ են փիլիսոփայական գիտութիւններու մէջ եւ համալսարանական վկայականով պսակուած: Շատ զոհ մնացին երբ բացատրեցինք ուսումնական ծրագիրը՝ որ կը գործադրուի Մուրատ-Ռափայէլեանի մէջ,

ուր յատուկ տեղ տրուած է իմաստասիրական գիտութեանց, եռամեայ դասաւանդութիւններով:

☆

Ուրիշ այցելութիւն մը, բոլորովին անակնկալ, ունեցանք Հոկտ. 22ին Երեւոյեան: Չորս հայ գիտնականներ էին Երեւանէն, որոնք Եւրոպա կատարած շրջապատի ընթացքին, իրենց նպատակ բրած էին Ս. Ղազարը:

Փրոֆ. Սուրէն Ստեփանեան, ժողովրդական քանդակագործ, հեղինակ Սաչատուր Արուսեանի արձանին:

Փրոֆ. Վարդգատ Յարութիւնեան, ճարտարապետ, Երեւանի Politechnique Institut-ի ճարտարապետութեան ամպիոնի վարիչ: Մասնակցած է բազմաթիւ պեղումներու, մասնաւորապէս Դուինի:

Փրոֆ. Ռուբէն Զարեան, գրականագէտ, թատերագիր, Հայաստանի Գիտութիւնների Ակադեմիայի Արուեստի Հաստատութեան վարիչ եւ տնօրէն, հեղինակ բազմաթիւ հետաքրքրական հրատարակութիւններու:

Փրոֆ. Սարգիս Բայանտուր, արուեստաբան, խմբագիր «Սովետական արուեստ» ամսագրին:

Այս անգամ ներկայ էին վանքի բոլոր Հայրերը. ոգեւորութիւնը ծայր աստիճանի հասաւ հայ մանրանկարչութեան բաժնին մէջ, ապա Այվազովսկիի նկարներուն գիմար:

Փրոֆ. Սուրէն Ստեփանեան հիացումով հետեւեալ տողերը կ'արձանագրէր վանքի այցելուներու մատենին մէջ.

Հանդիպել այցելեցի Ս. Ղազար կղզին՝ փոքրիկ Հայաստանը: Մեծ եւ փոքր Հայաստանի մարդիկ ջանք չալիտի խնայեն